

**5.4. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության 2004թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2004թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում:

Հոկտեմբերին նշված քաղաքների 11 դիտակայանների միջոցով վերցվել է օդի 2376 փորձանմուշ, նոյեմբերին՝ 12 դիտակայանների միջոցով 2645 փորձանմուշ: Որոշվել են մթնոլորտն աղտոտող նյութերի կոնցենտրացիաները:

- Երևան քաղաքում հոկտեմբերին վերցվել է օդի 1024 փորձանմուշ, նոյեմբերին՝ 1293 փորձանմուշ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, օզոնի, քլորոպարենի և արոմատիկ ածխաջրածինների կոնցենտրացիաները: Հոկտեմբերին փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 1.7, ծծմբի երկօքսիդինը՝ 2.8, ազոտի երկօքսիդինը՝ 3.8, ազոտի օքսիդինը՝ 1.3, օզոնինը՝ 2.1 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվազ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.6, օզոնինը՝ 1.4 անգամ: Սեպտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3, իսկ օզոնի, բենզոլի և տոլուոլի միջին ամսական կոնցենտրացիաները նվազել են համապատասխանաբար 1.6, 2.9 և 2.8 անգամ:

Նոյեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0, ծծմբի երկօքսիդինը՝ 2.8, ազոտի երկօքսիդինը՝ 3.5, ազոտի օքսիդինը՝ 1.2, գետնամերձ օզոնինը՝ 1.9, բենզոլինը՝ 3.9 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվազ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.2, գետնամերձ օզոնինը՝ 1.2, տոլուոլինը՝ 1.5 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5, բենզոլինը՝ 3.5, տոլուոլինը՝ 2.5 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>			
	առավելագույն		միջին ամսական	
	հոկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
Փոշի	-	-	0.2	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.32	0.31	0.14	0.14
Ազոտի երկօքսիդ	0.39	0.36	0.15	0.14
Ազոտի օքսիդ	0.21	0.20	0.08	0.07
Օզոն	0.228	0.191	0.063	0.057
Բենզոլ	0.765	1.543	0.111	0.392
Տոլուոլ	0.663	0.929	0.095	0.239
Քսիլոլ	-	-	-	-
Էթիլ բենզոլ	-	-	-	-
Քլորոպարեն	-	-	-	-

- Գյումրի քաղաքում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26-ական փորձանմուշ: Հոկտեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Սեպտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:

Նոյեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.3 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.7 անգամ:

- Վանաձոր քաղաքում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին վերցվել է օդի 780-ական փորձանմուշ: Հոկտեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7, ծծմբի երկօքսիդինը՝ 1.8 անգամ: Ածխածնի օքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4 անգամ: Սեպտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

Նոյեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7, ծծմբի երկօքսիդինը՝ 2.2, ածխածնի օքսիդինը՝ 1.3 անգամ: Ածխածնի օքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4. անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2, ածխածնի օքսիդինը՝ 1.3 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>			
	առավելագույն		միջին ամսական	
	հոկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
Փոշի	-	-	0.4	0.4
Ծծմբի երկօքսիդ	0.17	0.21	0.09	0.11
Ածխածնի օքսիդ	7.0	7.0	3.0	4.0
Ազոտի երկօքսիդ	0.09	0.08	0.04	0.04

- Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին վերցվել է օդի 26-ական փորձանմուշ: Հոկտեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Սեպտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 4.0 անգամ:

Նոյեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 2.0 անգամ:

- Ալավերդի քաղաքում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին վերցվել է օդի 494-ական փորձանմուշ: Հոկտեմբերին փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են 1.3-ական, ծծմբի երկօքսիդինը՝ 11.6 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 2.0 և 1.4 անգամ: Սեպտեմբեր ամսվա համեմատ որոշվող նյութերի կոնցենտրացիաների փոփոխություն չի դիտվել:

Նոյեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 11.6, ազոտի երկօքսիդինը՝ 1.5 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.9 և 1.4 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>			
	առավելագույն		միջին ամսական	
	հոկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
Փոշի	-	-	0.2	0.2
Օծմբի երկօքսիդ	0.98	0.96	0.58	0.58
Ածխածնի օքսիդ	5.0	5.0	2.0	2.0
Ազոտի երկօքսիդ	0.12	0.12	0.05	0.06

- Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին վերցվել է օդի 26-ական փորձանմուշ: Հոկտեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.0 անգամ: Սեպտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5 անգամ:

Նոյեմբերին փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.5 անգամ:

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Հոկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառում կատարվել է Փամբակ, Դեբեդ, Չորագետ, Մարցիգետ, Ախթալա, Սևջուր, Քասաղ, Հրազդան, Գետառ գետերից, Երևանյան և Սևանա լճերից: Վերցված փորձանմուշներից 8-ում որոշվել է 24 ցուցանիշ, իսկ 24-ում` 30 ցուցանիշ (վերցված 32 փորձանմուշում որոշվել է 912 ցուցանիշ):

Դեբեդ գետի ավազանից վերցված փորձանմուշներում 1.1-2.2 անգամ գերազանցվել են ամոնիում իոնի (Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում` 5 անգամ) և 1.9-3.8 անգամ նիտրիտ իոնի (Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում` 6.8 անգամ) ՍԹԿ-ները:

Ախթալա գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում 2.3 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի ՍԹԿ-ն:

Հրազդան գետի Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում և Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքում դիտվել է բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 10-ից մինչև 100 անգամ)` ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար, 34.8 և 12.3 անգամ, նիտրիտ իոնինը` 12.2 և 11.4 անգամ:

Բարձր աղտոտվածություն դիտվել է նաև Հրազդան գետի Գեղանիստ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում` նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար, 11.2 և 11.4 անգամ:

Հրազդան գետի Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն` լուծված թթվածնի պարունակությունը կազմել է, համապատասխանաբար, 3.6մգ/դմ<sup>3</sup> և 4.2 մգ/դմ<sup>3</sup>: Վերցված մյուս փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-6.6, ամոնիում իոնինը` 1.6-7.4, նավթամթերքինը` 1.6-3.2, պղինձ իոնինը` 13-23, մագնեզիում իոնինը` 1.1-1.4, թԿՊ<sub>5</sub>-ինը` 1.1-3.4 անգամ (Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում` 4.4 անգամ):

Սևջուր գետից, Գետառ և Քասաղ գետերի գետաբերաններից վերցված փորձանմուշներում 1.7-2.6 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի ՍԹԿ-ն:

Սևանա լճից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միայն պղինձ իոնի (10-16 անգամ), նավթամթերքի (1.6-3.2 անգամ) և մագնեզիում իոնի (1.1-2.0 անգամ) ՍԹԿ-ները:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

Նոյեմբերին մակերևութային ջրերի նմուշառում կատարվել է Փամբակ, Դեբեդ, Ջորագետ, Մարցիգետ, Արաքս, Սևջուր, Քասաղ, Արփա, Որոտան, Հրազդան, Գետառ, Մեղրիգետ, Ողջի, Գեղի, Արծվանիկ, Գորիսգետ, Վաչագան գետերից և Երևանյան լճից: Վերցված փորձանմուշներից 8-ում որոշվել է 24 ցուցանիշ, իսկ 32-ում՝ 30 ցուցանիշ (վերցված 40 փորձանմուշում որոշվել է 1152 ցուցանիշ):

Դեբեդ գետի ավազանից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-3.3 անգամ:

Ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է Վանաձոր քաղաքից ներքև և Ախթալա գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում, համապատասխանաբար, 5.5 և 1.2 անգամ:

Հրազդան գետի Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում դիտվել է լուծված թթվածնի պարունակության արտակարգ բարձր աղտոտվածություն (լուծված թթվածնի պարունակության իջեցում մինչև 2 մգ/դմ<sup>3</sup> և ցածր)՝ 1.3 մգ/դմ<sup>3</sup>:

Արտակարգ բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 100 և ավելի անգամ) դիտվել է նաև Ողջի գետում՝ Կապան քաղաքից վերև և ներքև ընկած հատվածքներում, պղինձ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար, 209.4 և 169.0 անգամ:

Հրազդան գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում դիտվել է լուծված թթվածնի պարունակության բարձր աղտոտվածություն (լուծված թթվածնի պարունակության իջեցում 3-ից մինչև 2 մգ/դմ<sup>3</sup>)՝ 2.6 մգ/դմ<sup>3</sup>:

Բարձր աղտոտվածություն դիտվել է նաև Հրազդան գետի գետաբերանի մոտ՝ ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 16.3 անգամ, Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում՝ 62.3 անգամ:

Պղինձ իոնով բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 30-ից 100 անգամ) դիտվել է Ողջի գետի Կապան քաղաքի տարածքից և Որոտան գետի Հորայք գյուղից վերև ընկած տարածքից վերցված փորձանմուշներում՝ ՍԹԿ-ն գերազանցվել է, համապատասխանաբար, 66 և 87 անգամ:

Վերցված մյուս փորձանմուշներում գերազանցվել է նիտրիտ իոնի ՍԹԿ-ն՝ 1.4-3.4 անգամ (Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում՝ 7.2, Քաջարան և Գորիս քաղաքներից ներքև ընկած հատվածքներում՝ 8.6 անգամ):

Գետառի գետաբերանի մոտ, Ողջի գետում՝ Քաջարան և Կապան քաղաքներից ներքև, Որոտան գետում՝ Հորայք գյուղից վերև, Գորիսգետում՝ Գորիս քաղաքից ներքև ընկած հատվածքներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.8-3.7 անգամ (Գեղանիստ գյուղի մոտ ընկած հատվածում՝ 6.4 անգամ):

Հրազդան գետի գետաբերանի, Սևջուր գետի Էջմիածին քաղաքից և Ռանչպար գյուղից ներքև, Քասաղ գետի գետաբերանի, Գեղի գետում՝ Գեղի գյուղից վերև, Արծվանիկի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-3.2 անգամ:

Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի մոտ, Սևջուր և Քասաղ գետերում մագնեզիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-1.9 անգամ:

Վերցված բոլոր փորձանմուշներում նավթամթերքի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6-4.8 անգամ (Որոտան գետում՝ Հորայք գյուղից վերև, Սիսիան քաղաքից ներքև, Արփա գետում՝ Վայք և Եղեգնաձոր քաղաքներից ներքև և Մեղրիգետի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում՝ 6.4 - 9.6 անգամ), պղինձ իոնի ՍԹԿ-ն՝ 2-15 անգամ:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

